ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/29, 16.03.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Արմավիր» ջրօգտագործողների ընկերություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03»

Գնման առարկան՝ պոմպերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել թիվ 4 արձանագրությամբ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընթացակարգի հրավերին չհամապատասխանելու և մերժելու մասին որոշումները,
2. դադարեցնել թիվ 5 արձանագրությամբ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձին

Բողոքաբեր՝
«Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ից
գրանցման համար՝ 31.110.01441
հասցե՝ Արմավիր մարզ, ք. Արմավիր, Սայաթ-Նովա 5ա/13

«Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի
ներկայացուցիչ Հարություն Օհանյան
նույնականացման քարտի տվյալներ՝ 011778511,
տրված 09.08.2021թ.-ին, 004-ի կողմից

Պատվիրատու՝
«Արմավիր» ջրօգտագործողների ընկերություն,
հասցե ՀՀ, Արմավիրի մարզ,
գ. Սարդարապատ, Աբովյան 72

ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03
պոմպեր

ԲՈՂՈՔԻ ԼՐԱՑՎԱԾ

I. Գործի նախապատմությունը.

17.02.2022.-ին «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու) **թղթային եղանակով** հայտարարել է ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի գնման առարկան էր պոմպերի ձեռքբերումը, որոնք խմբավորված էին 2 չափաբաժիններում (այսուհետ՝ Գնման առարկաներ): «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնին ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Հայտով առաջարկված ապրանքները համապատասխանում էին (համարժեք էին) Գնման առարկաներին, սակայն գնահատելով Պատվիրատուն մերժել է Ընկերության հայտը այն պատճառաբանությամբ, որ առաջարկված ապրանքները չեն համապատասխանում հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական չափանիշներին: 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ընկերության գնային առաջարկը ամենացածրն էր:

II. Բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1) 17.02.2022.-ին «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը **թղթային եղանակով** հայտարարել է ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցում: Ընթացակարգի գնման առարկան էր պոմպերի ձեռքբերումը, որոնք խմբավորված էին 2 չափաբաժիններում: Գնման առարկաների տեխնիկական բնութագրերը ներկայացված է ստորև՝ թիվ 1 աղյուսակում:

աղյուսակ թիվ 1

Ապրանքի	
անվանումը	տեխնիկական բնութագիրը
ԷՑՎ – 12-210-55 պոմպ	**1. ԷՑՎ – 12-210-55 HPO (կամ համարժեք)** - D-281մմ, - L -1850 մմ - քաշը – առավելագույնը 280 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ - փորձարկման ժամանակ արտադրելով 210 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էլ.էներգիա
ԷՑՎ – 12-160-65 պոմպ	**1. ԷՑՎ – 12-160-65 HPO (կամ համարժեք)** - D-281մմ, - L -1345 մմ - քաշը - առավելագույնը 220 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ - փորձարկման ժամանակ արտադրելով 160 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էլ.էներգիա

2) 02.03.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Ընկերության հայտը վերագնահատվել է և 2-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ: Անհամապատասխանությունները հստակ չեն նկարագրվել նկարագրվել են վերացական ձևով:

3) Ընկերությունը փորձելով կատարել Պատվիրատուի պահանջը Հայտով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար առաջարկված տեխնիկական բնութագրերը փոփոխել է և սահմանված ժամկետում ուղարկել է Պատվիրատուին: Փոփոխված Հայտով առաջարկված ապրանքները համապատասխանում էին (համարժեք էին) հրավերով սահմանված Գնման առարկաներին:

4) 04.03.2022թ-ի թիվ 4 արձանագրությամբ Ընկերության Հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մերժվել է, այն պատճառաբանությամբ, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Հրավերով սահմանվածին:

III. Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն «5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի **«կամ համարժեք»** բառերը:»:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ և 43-րդ «41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (...) Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:»:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):

43. Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) (...): Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից Ընկերությունը Հայտով առաջարկել է հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժիններին համապատասխանող (համարժեք), որպիսի հանգամանքներում Ընկերությանը ենթակա չէր, սակայն հաշվի չառնելով այդ հանգամանքը Պատվիրատուն մերժել է Ընկերության Հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, այդ կերպ նաև սահմանափակելով Ընկերության մասնակցությունը նշյալ գնման ընթացակարգին:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով Օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով.

խնդրում ենք՝

- պարտավորեցնել թիվ ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝
- Դադարեցնել թիվ 4 արձանագրությամբ «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի հայտը 1-ին 2-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգի հրավերին չհամապատասպանելու և մերժելու մասին որոշումները:
- Դադարեցնել թիվ 5 արձանագրությամբ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Կից ներկայացնում ենք.

Ներկայացուցչին տրված լիազորագրի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները:

Բողոքի վճարի վերաբերյալ փաստաթղթի պատճենը:

«Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի
ներկայացուցիչ Հարություն Օհանյան

Digitally signed by OHANYAN HARUTYUN 4009830433